Հավելված
ՀՀ կառավարության 2009 թվականի
փետրվարի 5-ի N 172 -Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՔԱՆԴՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՎԹԱՐԱՅԻՆ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԱՅԻՆ ՇԵՆՔԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ

1. Սույն կարգով բնակարաններով ապահովվում են հանրակացարանային բնակելի շենքերի կացարանների սեփականատերերը, կացարաններում փաստացի բնակվող և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության կողմից հաշվառված փախստականները, կացարանի համար ձևակերպված օրդերներով, Երևանի թաղային համայնքների ղեկավարների որոշումներով վարձակալ ճանաչված և փաստացի բնակվող բնակիչները, ինչպես նաև մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը հանրակացարանային շենքում անձնագրային հաշվառումով կամ առանց հաշվառման փաստացի երեք տարվանից ավելի բնակվող այն բնակիչները, ովքեր բնակարանի հատկացման պահին Հայաստանի Հանրապետության տարածքում չունեն բնակելի տուն կամ բնակարան կամ այլ բնակելի տարածք և իրենք կամ իրենց հետ համատեղ բնակվող անձինք (ծնողները, ամուսինը և երեխաները) վերջին հինգ տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքում չեն օտարել բնակելի տուն կամ բնակարան կամ այլ բնակելի տարածք:

2. Սույն կարգի 1-ին կետով նշված անձանց բնակարանների հատկացումն իրականացվում է՝

1) սեփականատերերին՝ բնակարանի հատկացում նախկինում զբաղեցրած սենյակների թվին համապատասխան: Ընդ որում, նախկինում զբաղեցրած սենյակների թիվն ընդհանուր

մակերեսում հաշվարկելու անհրաժեշտության դեպքում որոշվում է՝ մինչև 50 քառ.մետր՝ մեկսենյականոց բնակարան, 50-70 քառ. մետր՝ երկուսենյականոց բնակարան, 70-100 քառ.մետր՝ երեքսենյականոց բնակարան, 100 և ավելի՝ չորսսենյականոց բնակարան.

2) փախստականներին, վարձակալներին և սույն կարգի 1-ին կետում նշված այլ փաստացի բնակվող բնակիչներին՝ բնակարանի հատկացում՝ նախկինում զբաղեցրած բնակարանի սենյակների թվին համապատասխան, բայց ոչ ավելի, քան նրանց ընտանիքներին (անձերի թվով)՝ սույն ենթակետով սահմանված նորմերով՝

1) 1-2 անձից կազմված ընտանիքներին՝ մեկսենյականոց բնակարան.

2) 3-4 անձից կազմված ընտանիքներին՝ երկուսենյականոց բնակարան.

3) 5-6 անձից կազմված ընտանիքներին՝ երեքսենյականոց բնակարան.

4) յոթ և ավելի անձանցից կազմված ընտանիքներին՝ չորսսենյականոց բնակարան։

3. Սույն կարգի 2-րդ կետում նշված անձանց բնակարանները հանձնվում են սեփականության իրավունքով։

4. Հանրակացարանային շենքերի վթարային կացարանները զբաղեցնող բնակիչների հետ Հայաստանի Հանրապետության անունից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքվում են անշարժ գույքի փոխանակման կամ նվիրաբերության պայմանագրեր, որում սահմանվում են կողմերի հարաբերություններն ու բնակարանների հատկացման և զբաղեցրած վթարային բնակարանների ազատման հիմնական պայմանները։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ